



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**Հ Ր Ա Մ Ա Ն**

« 08 » « *օգոստոս* » 2019 թ. № 259-ՅԿ

**ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Նշանակել ծառայողական քննություն փաստաբան Լուսինե Մարտիրոսյանի 2019 թվականի հուլիսի 19-ի N 122/19 գրությամբ բարձրացված հարցերը ուսումնասիրելու դեպքով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցերն են՝

1) քարտուղարության պետ Նաիրա Ալավերդյանի, քարտուղարության արձանագրային և արխիվացման բաժնի պետ Հասմիկ Մկրտչյանի հուլիսի 17-ի գործողությունների օրինականությունը և հետևանքները,

2) քարտուղարության արձանագրային և արխիվացման բաժնի առաջատար մասնագետ Մարիամ Սարգսյանի աշխատանքից բացակայելու պատճառները:

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով՝

1) Աշոտ Ավալյան - Գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար,

2) Արմինե Հովհաննիսյան – Իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ,

3) Մերի Բաբայան – Անձնակազմի կառավարման բաժնի պետ:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունն անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«08» *օգոստոս* 2019 թ.  
ք. Երևան